ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հովսեփ Օրբելին (1887-1961) իր ողջ կյանքը նվիրել է հայրենի պատմության հետազոտությանը՝ հիմնվելով հնագիտական և վիմագիր, հին և միջնադարյան սկզբնաղբյուրների վրա: Ավելին, մեծ գիտնականը, ամբողջացնելով հետազոտական ոլորտները, իր ուսումնասիրությունների բնագավառն է ընդգրկել նաև արևելագիտական և կովկասագիտական հարցերը[1]: Տարիների բեղմնավոր գիտահետազոտական աշխատանքի շնորհիվ Օրբելին իրեն փայլուն դրսևորել է որպես պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, վիմագրագետ, հնագետ, լեզվաբան, բանագետ, ազգագրագետ, արվեստագետ՝ դասվելով XX դարի խոշորագույն հայագետների շարքը[2]:

Հ. Օրբելին գիտահետազոտական աշխատանքի ձիրք ցուցաբերեց դեռևս Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանում: Պատմաբանասիրական ֆակուլտետում չբավարարվելով հունահռոմեական հնությունների դասընթացով՝ Օրբելին արտակարգ հետաքրքրասիրություն է ցուցաբերում Հայաստանի, Վիրքի և Իրանի հին և միջնադարյան պատմության ու մշակույթների նկատմամբ: Հայոց հնությունները ձգում էին երիտասարդ գիտնականին արյան կանչով: Օրբելու կյանքում շրջադարձային նշանակություն ունեցավ 1906

---

[1] *Գիտաստեղծագործական բեղմնավոր ճանապարհ անցած ակադեմիկոս Հ. Օրբելին գիտության մեծ նվիրյալ էր ու փայլուն կազմակերպիչ. Ս. Պետերբուրգի (1924-1991 թթ. վերանվանվել էր Լենինգրադ) համալսարանի պրիվատ-դոցենտ, այնուհետև՝ դոցենտ (1914-1918), պրոֆ. (1919-1933), 1919 թ. Ռուսաստանի Լուսժողկոմատի թանգարանների գործերով կոլեգիայի գիտական քարտուղար, հայ-վրացական բանասիրության (1925-1929), նյութական մշակույթի (1929-1931), Էրմիտաժի ավանդապահ (1920-1926), բաժնի վարիչ (1926-1933), տնօրեն (1934-1951), միևնույն ժամանակ ԽՍՀՄ ԳԱ նյութական մշակույթի պատմության ինստիտուտի տնօրեն (1937-1939): Հ. Օրբելին 1935 թ. ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Մեծ է Օրբելու ավանդը հայրենական գիտության և մշակույթի զարգացման գործում: 1938 թ. նա ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) նախագահության նախագահ և անմնացորդ նվիրվում հայրենի գիտության կազմակերպման աշխատանքներին այնպիսի բարդ պայմաններում, երբ քաղաքական բռնաճնշումների հետևանքով շատ գիտնականներ հետապնդումների, ձերբակալությունների, աքսորի և գնդակահարությունների էին ենթարկվում: Հ. Օրբելին հնարավորինս ուշադրություն էր դարձնում գիտական կենտրոնների ամրապնդմանը և գիտական կադրերի պատրաստմանը: Նրա ակտիվ մասնակցությամբ 1943 թ. Հայաստանի Ժողկոմխորհը որոշում ընդունեց ԱրմՖԱՆ-ի հիմքի վրա Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան ստեղծելու մասին, որի առաջին նախագահ ընտրվեց ակադեմիկոս Հ. Օրբելին: Միևնույն ժամանակ նա ՀԽՍՀ ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրենն էր: 1947 թ. մինչև 1951 թ. նա շարունակում է վարել Էրմիտաժի տնօրենի պաշտոնը: Այնուհետև աշխատում է Լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող (1953-1955), 1955 թ.՝ արևելագիտության ֆակուլտետի դեկան, իսկ 1956- 1961 թթ.՝ նաև «Մերձավոր և Միջին Արևելքի պատմության» ամբիոնների պրոֆեսոր-վարիչ և Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ: Հ. Օրբելին իր գիտակազմակերպչական մեծ վաստակի համար արժանացել է պետական բարձր պարգևների:*

[2] **Ցուզբաշյան Կ. Ն.,** *Հովսեփ Օրբելին որպես հայագետ (Պատմա-բանասիրական հանդես, այսուհետև՝ ՊԲՀ), 1987, N 1, էջ 11: Տե՛ս նաև՝* **Юзбашян К. Н.** *Академик Иосиф Абгарович Орбели, М., 1964,* **Պետրոսյան Յու.,** *Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի (ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1987, N 1, էջ 3-10:*

թվականից Բագրատունյաց թագավորության Անի մայրաքաղաքի պեղումներին մասնակցելը:

1911 թ. փայլուն կերպով ավարտելով արևելյան լեզուների և պատմաբանասիական ֆակուլտետների լրիվ դասընթացը՝ Օրբելին շարունակում է մասնակցել Անիի հնագիտական պեղումները կատարող խմբի աշխատանքներին: Միևնույն ժամանակ Օրբելին նշանակվեց Անիի Հնադարանի տնօրեն[3]: Այդ ընթացքում հրատարակվեցին Անիի քաղաքատեղին և ճարտարապետական հուշարձաններին նվիրված հետազոտություններ[4]: Հ. Յորբելին շարադրում է քաղաքի պատմությունը, ապա տալիս է նկարագիրը և համառոտակի խոսում պեղումների մասին:

Հաջորդը՝ դեպի Արևմտյան Հայաստանի հինավուրց Վան քաղաքն ու Մոկս գավառը 1911-1912 թթ. կատարված գիտարշավներն էին: Նրա նպատակն էր Մեծ Հայքի Մոկք աշխարհում հայերենի տեղական բարբառի[5] և Վասպուրական աշխարհում Վան քաղաքի ժայռի և հնավայրերի, սեպագրերի ու ազգագրական նյութերի ուսումնասիրությունը:

Հ. Օրբելու հետազոտական աշխատանքին բնորոշ էր պատմագիտության և բանասիրության տարբեր բնագավառներին պատկանող տվյալների համակարգված ուսումնասիրությունը[6]: Այդ մեթոդաբանությունը դրսևորվեց նրա հետազոտական աշխատանքի հենց սկզբնական փուլից: Դրանով էր պայմանավորված Օրբելու ներդրումը հայոց պատմամշակութային արժեքների ուսումնասիրության բնագավառում:

Հ. Օրբելու հնագիտական, վիմագրագիտական, բանահյուսական հետազոտությունները հարստացրեցին հայագիտությունը արժեքավոր տվյալներով, որոնք հիմքեր էին ստեղծում հետագա գիտահետազոտական աշխատությունների համար:

Անիում, Վանում իրականացված հետազոտություններին հաջորդեցին Աղթամարում կատարված ուսումնասիրությունները, որոնք ամփոփվեցին

---

[3] 1917 թ. թուրքերը ներխուժեցին Անիի տարածքը, և Հնադարանը ենթարկվեց ավերման: Նշվել է, որ «Անիի հնությունները սպառնալիքի տակ են, պահպանության որևէ աշխատանք չի տարվում, իսկ հայ գիտնականները կարող են դիտել Անին լավագույն դեպքում այս ափից: Պարզ է, որ Հ. Օրբելու՝ բարձր մակարդակով կազմած տեղեկատու հրատարակությունները (ինչպես նաև Ն. Մառի մանրամասն հաշվետվությունները) կոչված են ինչ-որ չափով վերականգնելու Բագրատունյաց մայրաքաղաքի մոտավոր պատկերը» (**Յուզբաշյան Կ.**, նշվ. աշխ., էջ 12):

[4] **Орбели И.** *Каталог Анийского музея древностей, СПб., 1910;* **Орбели И.** *Краткий путеводитель по городищу Ани (с планом), СПб., 1910;* **Орбели И.** *Развалины Ани. История. Современное состояние. Раскопки, СПб., 1911, (п»°л* **Орбели И. А.** *Избранные труды, Е., 1963, с. 1-27, 103-132).*

[5] **Орбели И. А.** *Фольклор и быт Мокса [Материалы подготовила к печати Р. Орбели], М., 1982. Из архива И. А. Орбели. Топографический и этнографический очерк Мокса (подготовил к печати, с примечаниями и некоторыми сокращениями А. Т. Ганаланян) (ՊՊՀՀ, 1977, N 2, p. 251-272).* Կ. Յուզբաշյանը նշել է, որ Օրբելին աշխատել էր հենց Մոկսում, նա եղավ առհասարակ վերջինը, որովհետև *1915 թ. Մեծ եղեռնի հետևանքով Մոկսի ազգաբնակչությունը կամ ոչնչացվեց, կամ ընդմիշտ լքեց հայրենիքը»* (**Յուզբաշյան Կ.**, նշվ. աշխ., էջ 16):

[6] *1909 թ. հրատարակվեցին Հովսեփ Օրբելու՝ Нефритовая кинжальная рукоять с армянской надписью; hАсан Джалал, князь Хаченский, 1912 г.; Колокол с анийскими орнаментальными мотивами XII-XIII века, 1915 г.; Бытовые рельефы на хаченских крестных камнях XII и XIII веков, 1916 г.; Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями (տե՛ս* **Орбели И. А.** *Избранные труды, с. 135-195, 205-215 և այլ աշխատություններ):*

հիմնականում նրա՝ «Հայկական ճարտարապետության հուշարձանները Աղթամար կղզում» աշխատության մեջ[7]: Պատմական սկզբնաղբյուրների հիման վրա՝ հայկական ճարտարապետության պատմության հոլովույթում մանրամասն հետազոտելով ճարտարապետական հուշարձաններով Աղթամար կղզու կառուցապատման իրողությունը, Հովսեփ Օրբելին առանձնակի ուշադրություն է դարձրել Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու ճարտարապետությանը[8] և քանդակներին, որոնցից նա հատուկ ուսումնասիրել է թե՛ հինավուրց ազգային ակունքներ ունեցող «Սասունցի Դավիթ»՝ «Սասնա ծռեր» դյուցազնավեպին աղերսվող կերպարները և թե՛ «խաղողի գոտին», որպես ազգագրական պատկերներով մի նմուշ[9]:

Երկար տարիներ Օրբելին ուսումնասիրել է «Սասնա ծռեր» էպոսը: 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանի տոնակատարության առիթով նա մեծագույն կազմակերպչական ջանքեր գործադրեց, ինչպես նաև եղավ էպոսի համահավաք բնագրի հրատարակության պատասխանատու խմբագիրը և առաջաբանի հեղինակը: Օրբելին նաև նույն թվականին լույս տեսած «Սասնա ծռեր»-ի ռուսերեն թարգմանության առաջաբանի հեղինակն էր[10]: Տարիների պրպտումների արդյունքը եղավ 1956 թ. «Սասնա ծռեր» էպոսին նվիրված «Հայկական հերոսական էպոսը» գրքի հայերեն և ռուսերեն հրատարակությունը[11]:

Հ. Օրբելու հետաքրքրությունների շրջանակում էին հայ միջնադարյան առակները, որոնք, ինչպես և էպոսում, արտացոլում էին ժողովրդի իմաստությունը: Նույն՝ 1956 թ. լույս տեսավ Օրբելու «Միջնադարյան Հայաստանի առակները» գիրքը[12]:

Հ. Օրբելին մեծ հետաքրքրություն և մասնագիտական ունակություններ է ցուցաբերել վիմագիր արձանագրությունների ուսումնասիրության բնագավառում: Վիմագիր արձանագրությունների Օրբելու հետազոտությունների շարքին են պատկանում Անիի, Բագավանի, Բագարանի, Նախիջևանի, Սանահնի կամրջի, Մարմաշենի վանքի, Խաչենում գտնվող հուշարձանների[13], այդ թվում նաև Գանձասարի վանքի[14], Թալինի եկեղեցու, Կարսի աշտարակների շինարարական վիմագիր արձանագրությունների ընթերցումը[15]:

Հ. Օրբելու բազմակողմանի ուսումնասիրությունների ոլորտում կարևորվում են նրա հայագիտական հետազոտությունները, հայ պատմիչ-

---

[7] **Орбели И. А.** *Избранные труды в двух томах, т. 1, М.-Л., 1968, с. 17-204.*

[8] **Орбели И. А.** *О первоначальной форме купола Ахтамарского храма (п»°л* **Орбели И. А.** *Избранные труды, с. 222-228).*

[9] **Орбели И. А.** *Избранные труды в двух томах, т. 1, с.110, 135-168.*

[10] *Давид Сасунский. Армянский народный эпос, М.-Л., 1939.*

[11] **Հովսեփ Օրբելի,** *Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1956, նույնը՝ ռուսերեն:*

[12] **Иосиф Орбели.** *Басни средневековой Армении, М.-Л., 1956;* **Орбели И. А.** *Басни средневековой Армении (Избранные труды в двух томах, т. I, с. 209-385, 420-504, 521-534).*

[13] **Ուլուբաբյան Բ. Ա.,** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975:*

[14] **Орбели И.** *Бытовые рельефы на хаченских крестных камнях XII и XIII веков, п»°л* **Орбели И. А.** *Избранные труды, с. 196-204 .*

[15] *Տե՛ս* **Орбели И. А.** *Избранные труды, с. 371-476; Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Ե., 1966:*

ների (Եղիշէ[16], Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի) երկերի ուսումնասիրությունները և թարգմանությունները:

Հ. Օրբելու գիտական ժառանգությունը, հայրենանվեր գործունեության արդյունքները, ստեղծած պատմագիտական դպրոցը, բազում աշակերտները նրա մեծ վաստակի վկայությունն են, որի շնորհիվ նրա հանդեպ եղած սերն ու ակնածանքը իր սրտում է կրում պատմագիտության ասպարեզ մտնող նոր սերունդը:

Ս.Պետերբուրգում կանգնեցված է Հ. Օրբելու կիսանդրին: Ծաղկաձորում բացված է Օրբելի եղբայրների տուն-թանգարանը:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.
Պատմական գիտությունների դոկտոր

[16] **Егишэ.** *О Вардане и войне армянской. Перевод с древнеармянского акад. И. А. Орбели. Подготовка к изданию, предисловие н примечания К. Н. Юзбашяна, Е., 1971.*